ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՐԴԵԳՐՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երեխայից հրաժարվելը նշանակում է երեխային մշտապես հանձնել որդեգրման գործակալությանը, որպեսզի գործակալությունը կարողանա ընտրել երեխային որդեգրող այլ ծնող(ներ)ի: Դուք երեխային մշտապես հանձնում եք որդեգրման գործակալությանը՝ ստորագրելով սույն Համաձայնության արձանագրությունը և Հրաժարման փաստաթուղթը: Որպես ծնող՝ Դուք այլևս որևէ իրավունք չեք ունենա Ձեր երեխայի նկատմամբ այն պահից, երբ այս փաստաթղթերը կգրանցվեն ու կհաստատվեն Կալիֆորնիայի Սոցիալական Ծառայությունների Վարչության կողմից:

Եթե Ձեր մասին կարծիք կա, որ Դուք երեխայի ենթադրյալ հայրն եք, ապա պետք է իրազեկ լինեք, որ, ըստ օրենքի, Դուք օրինական իրավունքներ և պարտականություններ ունեք երեխայի նկատմամբ՝ նույնիսկ եթե Դուք ժխտում եք հայրությունը: Դուք նաև խորհրդատվություն փնտրելու իրավունք ունեք՝ երեխայի ֆիզիկական խնամակալության իրավունք ձեռք բերելու նպատակով: Եթե Դուք ուզում եք լինել երեխայի ծնողը, կան մատչելի ծառայություններ, որոնք կօգնեն Ձեզ:

Ձեր երեխային որդեգրման գործակալությանը հանձնելը շատ կարևոր որոշում է: Դուք պետք է իմանաք բոլոր փաստերն այդ մասին և ծանրութեթև անեք այդ որոշման առավելություններն ու թերությունները՝ նախքան այն կայացնելը:

Համաձայնության Արձանագրությունը լրացնելու հրահանգներ.

ՆԱԽՔԱՆ ՍՈՒՅՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱԺԱՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ՍՏՈՐԱԳՐԵԼԸ, ԵՐԿՈՒՍՆ ԷԼ ՇԱՏ ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱՑԵՔ ՁԵՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿՑԻ ՀԵՏ: ՎՍՏԱՀԱԲԱՐ ՀԱՐՑԵՐ ՏՎԵՔ ԱՅՆ ԱՄԵՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ԻՆՉԸ ՉԵՔ ՀԱՍԿԱՆՈՒՄ:

1. *Սույն համաձայնության արձանագրությունը ստորագրեք այն բանից հետո միայն, երբ մանրակրկիտ կերպով խորհել եք Ձեր երեխային որդեգրման գործակալությանը հանձնելու մասին և վստահորեն ցանկանում եք, որ Ձեր երեխան որդեգրվի ու դաստիարակվի որդեգրման գործակալության ընտրած ապագա հոգեծնող(ներ)ի կողմից:*

2. *Այս փաստաթղթի յուրաքանչյուր պնդում կարդացեք շատ ուշադիր: Եթե որևէ պնդում չեք հասկանում,հարցրեք Ձեր սոցիալական աշխատակցին, որպեսզի նա բացատրի այնքան ժամանակ, մինչև հասկանաք:*

3. *Եթե պնդումը հասկանում եք և համաձայն եք դրա հետ, Ձեր անվան սկզբնատառերը գրեք այդ պնդման համարին կից վանդակի մեջ:*

4. *Եթե պնդմանը համաձայն չեք կամ այն չեք հասկանում սոցիալական աշխատակցի բացատրությունից հետո, Ձեր անվանատառերը վանդակի մեջ մի գրեք: Խնդրեք լրացուցիչ օգնություն ու ժամանակ՝ որոշում կայացնելու համար:*

5. *Եթե բոլոր վանդակները նշել եք Ձեր անվան սկզբնատառերով, վերջում ստորագրեք: Ձեր անունը ստորագրելու պահին պետք է երկու վկա ներկա լինեն, որոնք իրենց անունները կստորագրեն Ձեր ստորագրությունից հետո: (Վկաների անհրաժեշտություն չկա, եթե սույն ձևը ստորագրված է Կալիֆորնիայի սահմաններից դուրս):*

6. *Դուք կստանաք սույն Համաձայնության Արձանագրության պատճենը և Հրաժարման փաստաթուղթը, հենց որ այն լրացվի:*

Սույն ձևը պարտադիր կերպով պետք է օգտագործվի հետևյալ ձևերից մեկի հետ.
AD 501, AD 501A, AD504, AD 583, AD 584, կամ AD 4339:

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երեխայի մայրը կամ ենթադրյալ հայրը, ով կալանավորված չէ, Անչափահասների դատարանի արտատնային խնամառու, կամ Իրավական խնամակալության տակ

Երեխայի անունը _____ Ծննդյան ամսաթիվը_____

1. Ես հասկանում եմ, որ իրավունք ունեմ փնտրելու իրավաբանի, ով ինձ կօգնի հրաժարման գործընթացում, և որդեգրման գործակալությունը կարող է ինձ ուղղորդել, թե ինչպես կարելի է իմ համայնքում հանրային իրավաբանական օգնություն ստանալ:

2. Ես հասկանում եմ, որ գործակալությունը պետք է ինձ պատմի իմ երեխայի հետ կապված իր որդեգրման ծրագրի մասին:

3. Ես հասկանում եմ, որ երեխայիս որդեգրության հանձնելու իմ մտադրության մասին կարող եմ խոսել այլ մասնագետների, ընտանիքիս և մտերիմներիս հետ:

4. Ես հասկանում եմ, որ եթե ստորագրում եմ սույն Համաձայնության Արձանագրությունը և Հրաժարման փաստաթուղթը, ապա այլևս չեմ լինի իմ երեխայի օրինական ծնողը այն պահից սկսած, երբ այդ փաստաթղթերը գրանցվեն ու հաստատվեն Կալիֆորնիայի Սոցիալական ծառայությունների վարչության կողմից: Սա նշանակում է՝

   Ա. Ես այլևս պատասխանատու չեմ լինի իմ երեխայի խնամքի համար, և

   Բ. Ես այլևս որևէ իրավունք չեմ ունենա իմ երեխայի խնամակալության, ծառայությունների և եկամուտների նկատմամբ:

5. Ես հասկանում եմ, որ եթե վստահ չեմ, որ ուզում եմ հրաժարվել իմ երեխայից, ապա կան այլ տեղեր, որոնք գործակալությունը կարող է ինձ առաջարկել և որտեղ ես կարող եմ ընտանեկան, առողջական,դրամական և այլ հիմնախնդիրների հետ կապված օգնություն ստանալ:

6. Ես հասկանում եմ, որ, հրաժարումը ստորագրելով, ես իմ երեխային հանձնում եմ որդեգրման գործակալությանը:

   Ա. Եթե ես ստորագրում եմ հրաժարումը, որը չի անվանանշում ապագա հոգեծնող(ներ)ին, ապա ես զիջում եմ ապագա հոգեծնող(ներ)ին ընտրելու իրավունքը, և վերջնական որոշումը, թե ով կորդեգրի իմ երեխային, կկայացնի որդեգրման գործակալությունը:

   ☐ Ես չեմ անվանանշում իմ երեխայի ապագա հոգեծնող(ներ)ին:

   Բ. Եթե ես ստորագրում եմ հրաժարումը, որն անվանանշում է ապագա հոգեծնող(ներ)ին, ապա իմ երեխային հանձնում եմ որդեգրման գործակալությանը, որը մտադիր է իմ երեխային հատկացնել Հրաժարման փաստաթղթում նշված անձին (անձանց):

   ☐ Ես անվանանշում եմ հետևյալանձին (անձանց)՝ որպես ապագա հոգեծնող(ներ)ի.

   ☐

_____

Եթե իմ երեխան չտեղավորվի նշված անձի/անձանց տանը կամ տնից հեռացվի նախքան որդեգրության ավարտը,

(1) Գործակալությունն այդ մասին ինձ կծանուցի առաքման անդորրագրով հաստատվող պատվիրված փոստային առաքմամբ՝ իմ երեխային որդեգրման չհատկացնելու որոշումից կամ նրան տնից հեռացնելու որոշումից հետո 72 ժամվա ընթացքում: Ես պետք է գործակալությանը հայտնեմ իմ հասցեն, եթե ցանկանում եմ նման ծանուցում ստանալ:

(2) Ծանուցումն ինձ ուղարկելու օրից հաշված՝ ես 30 օր ժամանակ ունեմ, որպեսզի.

ա. Չեղյալ հայտարարեմ հրաժարումը: Գործակալությունը չեղյալ կհամարի հրաժարումը, եթե ես մինչև 30-օրյա ժամկետի ավարտը փոստով կամ այլ միջոցով գործակալությանն ուղարկեմ կամ ուղարկած լինեմ գրավոր խնդրանք՝ չեղյալ համարել հրաժարումը, կամ

բ. Որևէ գործողություն չձեռնարկեմ: Եթե 30-օրյա ժամկետում ես ոչ մի գործողության չդիմեմ, ես կկորցնեմ հրաժարումը չեղյալ հայտարարելու իմ իրավունքը, և գործակալությունը հոգեծնող(ներ) կընտրի իմ երեխայի համար, կամ

գ. Այլ տեղ ընտրեմ իմ երեխայի համար: Եթե 30-օրյա ժամկետում ես ընտրեմ այլ անձի/անձանց, ում տանը իմ երեխան պետք է տեղավորվի, ես չեղյալ կհայտարարեմ սկզբնական հրաժարումը և նոր Հրաժարման փաստաթուղթ կլրացնեմ՝ նշելով այն անձին/անձանց, ում մոտ ցանկանում եմ, որ գործակալությունը տեղավորի իմ երեխային:

7. Ես հասկանում եմ, որ ապագա հոգեծնող(ներ)ը և կենսաբանական ազգականները՝ ներառյալ կենսաբանական ծնողները, կարող են հարկադրաբար կիրառելի համաձայնագիր կնքել, որով կթույլատրվի շարունակական կապ պահպանել կենսաբանական ազգականների՝ ներառյալ կենսաբանական ծնողների, և երեխայի միջև, եթե դատարանը հավանություն տա:

8. Ես հասկանում եմ, որ եթե որոշում եմ իմ երեխային չհանձնել որդեգրման գործակալությանը, ես կարող եմ իմ երեխային որդեգրության տալ ծնող(ներ)ին, ում ես ինքս կգտնեմ, և համաձայն եմ իմ երեխայի որդեգրմանը միայն այս ծնող(ներ)ի կողմից: Սա կոչվում է Անկախ որդեգրում:

9. Ես հասկանում եմ, որ այն բանից հետո, երբ դատարանը կճանաչի որդեգրությունը, ցանկացած արյունակից ազգականի նկատմամբ բոլոր ժառանգական իրավունքները կավարտվեն, եթե նրանք հատկապես իմ երեխային ներառնող դրույթներ չեն նախատեսել իրենց կտակում կամ խնամառության փաստաթղթում: Իմ երեխան օրինականորեն ժառանգություն կստանա իր ապագա հոգեծնող(ներ)ից:

10. Ես հասկանում եմ, որ եթե ստորագրում եմ սույն Համաձայնության Արձանագրությունը և Հրաժարման փաստաթուղթը, ես դրանք կարող եմ հետ վերցնել ստորև 18-րդ կետում նշված հետաձգման ցանկացած ժամանակամիջոցի ընթացքում կամ նախքան դրանք Կալիֆորնիայի Սոցիալական ծառայությունների վարչության կողմից գրանցվելը և հաստատվելը:

Ա. Բնականոն հանգամանքներում, որդեգրման գործակալությունը պետք է իմ երեխային ինձ վերադարձնի երեք աշխատանքային օրվա ընթացքում, և ոչ մի դեպքում դա յոթ օրացուցային օրից ավելի չպետք է տևի:

Բ. Իմ՝ որպես երեխայիս ծնողի, իրավունքներն ու պարտականությունները

կշարունակվեն, եթե չխլվեն այլ իրավական գործողությամբ:

Գ. Եթե որդեգրման գործակալությունը կարծում է, որ իմ երեխային ինձ վերադարձնելը ցավ կպատճառի կամ այլապես կվնասի իմ երեխային, գործակալությունը գործն անհապաղ կհղի շրջանի երեխաների պաշտպանության ծառայություններ տրամադրող մարմնին: Որդեգրման գործակալությունն ինձ գրավոր տեղյակ կպահի, եթե այդպես վարվի:

11. Ես հասկանում եմ, որ այն բանից հետո, երբ Կալիֆորնիայի Սոցիալական ծառայությունների վարչությունը գրանցի ու հաստատի իմ ստորագրած հրաժարումը, այն վերջնական կլինի, և

Ա. Ես չեմ կարող կասեցնել հրաժարումը ու ետ ստանալ իմ երեխային, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է որդեգրման գործակալությունը համաձայնությունը, կամ եթե ապագա հոգեծնող(ներ)ը անվանանշված է (են) հրաժարման փաստաթղթում, իսկ իմ երեխան չի տեղավորվել նշված տանը կամ այդ տնից հեռացվել է նախքան որդեգրության ավարտը:

Բ. Եթե որդեգրման գործակալությունը համաձայն չէ, որդեգրման գործակալությունն ինձ պետք է գրավոր տեղեկացնի երեխայիս չվերադարձնելու հիմք(եր)ի մասին:

Գ. Եթե որդեգրման գործակալությունը համաձայն է վերադարձնել երեխայիս, իմ ծնողական իրավունքներն ու պարտականությունները կշարունակվեն, եթե դրանք չդադարեցվեն այլ իրավական գործողությամբ:

Դ. Եթե որդեգրման գործակալությունը համաձայն է վերադարձնել երեխայիս, բնականոն ընթացքի դեպքում դա պետք է տեի երեք աշխատանքային օր և ոչ մի դեպքում յոթ օրացուցային օրից ավելի:

12. Ես հասկանում եմ, որ եթե երեխան անչափահասների գործերով դատարանի խնամառու է կամ անչափահասների գործերով դատարանի ընդդատության համար միջնորդության առարկա, ապա որդեգրման գործակալությունը պետք է հրաժարման մասին գրավոր ծանուցում ներկայացնի անչափահասների գործերով դատարանին, երեխայի փաստաբանին և իմ փաստաբանին, եթե այդպիսիք կան, հինգ դատական օրվա ընթացքում:

13. Ես հասկանում եմ, որ մինչ իմ երեխայի օրինական որդեգրությունը, որդեգրման գործակալությունը պետք է պատասխանի նրա վիճակի մասին իմ հարցերին: Եթե հետագայում որևէ ժամանակ ես տեղեկատվություն պահանջեմ, գործակալությունը պետք է ինձ տրամադրի բոլոր հայտնի տեղեկությունները իմ երեխայի որդեգրման կարգավիճակի մասին՝ ներառյալ այլ մասին, թե արդյո՞ք իմ երեխան տրվել է որդեգրության, որդեգրման ավարտի մոտավոր օրը և, եթե որդեգրումը չի ավարտվել կամ բեկանվել է որևէ պատճառով, արդյո՞ք իմ երեխային որդեգրության հանձնելու հարցը վերաքննարկվում է:

Ա. Ես հասկանում եմ, որ որդեգրման գործակալությանը պետք է հայտնեմ իմ հասցեն, եթե ուզում եմ իմանալ, թե երբ է իմ երեխան տեղավորվել որդեգրող ընտանիքում և երբ է նա օրինականորեն որդեգրվել:

14. Ես հասկանում եմ, որ իմ երեխայի օրինական որդեգրությունից հետո որդեգրման գործակալությունը կարող է իմ երեխային ինձ չվերադարձնել:

15. Ես հասկանում եմ, որ որդեգրման գործակալությունը կարող է անձնական տվյաներ հանել որդեգրման գործի մատյանից ու տրամադրել այն դեպքում միայն, երբ.

    Ա. Դա պահանջվել է օրենքով նշված որոշակի գործակալությունների կողմից, որովհետև տվյալ տեղեկությունն անհրաժեշտ է իմ երեխային օգնելու համար:

    Բ. Իմ երեխան չափահաս է դարձել և ես անձնական տվյալների հրապարակումը թույլատրող համաձայնության ձևեր եմ ստորագրել, որպեսզի հնարավոր լինի կապ հաստատել ինձ հետ:

    Գ. Իմ երեխան դարձել է 21 տարեկան, խնդրում է բացահայտել իմ ինքնությունը, և ես որդեգրման գործակալության մատյանում գրավոր համաձայնություն եմ տվել իմ ինքնությունը և վերջին բնակության հասցեն հրապարակելու մասին:

    Դ. Իմ երեխան հասել է 21 տարեկան հասակի և գրավոր նշել է, որ ես կարող եմ իմանալ իր նոր անունը և վերջին բնակության հասցեն՝ ինչպես նշված են որդեգրման գործակալության մատյանում, և ես խնդրել եմ տրամադրել այդ տեղեկությունները, կամ

    Ե. Իմ երեխան 21 տարեկանից փոքր է, և որդեգրման գործակալությունը համարում է, որ իմ ինքնության և վերջին բնակության հասցեի հրապարակումը՝ ինչպես նշված են գործակալության մատյանում, հիմնավորված է ըստ օրենքի:

16. Ես հասկանում եմ, որ դատարանը, խնդրանք ստանալու և այն քննելուց հետո, կարող է դատարանի որդեգրման գործերի արխիվից հանած անձնական տվյալները տրամադրել խնդրատուին:

17. Ես հասկանում եմ, որ եթե ենթադրում եմ, թե ինձ դիտումնավոր կերպով չեն ասել որդեգրության նպատակով իմ երեխայից հրաժարվելու մասին ճշմարտությունը, ես որդեգրման ավարտի օրվանից հետո երեք տարի ժամանակ ունեմ՝ դատարանից իմ երեխայի որդեգրման դադարեցումը պահանջելու մասին:

18. Ես հասկանում եմ, որ գրանցման հետևյալ ընտրանքներն ունեմ, երբ ստորագրում եմ Համաձայնության Արձանագրությունը և Հրաժարման փաստաթուղթը՝

    Ա. Ես կարող եմ ընտրել, որ որդեգրման գործակալությունն իմ հրաժարումը գրանցի անմիջապես,կամ

    Բ. Ես կարող եմ ընտրել, որ որդեգրման գործակալությունն իմ հրաժարումը հետաձգի մինչև 30 օրով, որպեսզի կարողանամ խորհրդածել իմ որոշման մասին: Ես հասկանում եմ, որ իմ երեխան որդեգրության չի տրվի հետաձգման ցանկացած ժամանակամիջոցի ընթացքում:

    Գ. Ես կարող եմ որդեգրման գործակալության հետ համաձայնության գալ՝ հրաժարման ձևի լրացումը 30 օրից ավելի հետաձգելու մասին, եթե իմ երեխան պետք է որևէ այլ ծնող(ներ)ի կողմից որդեգրվելու հնարավորություն ստանա: Ես հասկանում եմ, որ իմ երեխան որդեգրության չի տրվի հետաձգման ցանկացած ժամանակամիջոցի ընթացքում:

Նշում արեք հետևյալ պնդումներից մեկի դիմաց, որով կհաստատեք, թե գրանցման ինչ տարբերակ եք ընտրում.

☐ Ես ուզում եմ, որ հրաժարման ձևը գրանցվի անմիջապես:

☐ Ես ուզում եմ, որ հրաժարման ձևի գրանցումը հետաձգվի _____ օրով՝ մինչև_____:

☐ Ես համաձայն եմ, որ հրաժարման ձևի գրանցումը հետաձգվի մինչև իմ երեխան այլ ծնող(ներ)ի կողմից որդեգրվելու հնարավորություն ստանա:

19. **Նշեք պնդումների այն վանդակները, որոնք կիրառելի են Ձեր նմակտմամբ.**

Ա

☐ Ես բնակվում եմ Կալիֆորնիայում,

☐ Ես Կալիֆորնիայում եմ, բայց բնակվում եմ _____-ում (հաստատված ICPC 100A ձևը կցված է), կամ (Նահանգը)

☐ Ես բնակվում եմ Կալիֆորնիայից դուրս և վերոնշյալ երեխայից հրաժարվում եմ Կալիֆորնիայի Ընտանեկան Օենսգրքի Հոդված 8700(d)-ի համաձայն, որը կիրառելի է, քանի որ երեխան իմ ֆիզիկական խնամակալության տակ է:

Ես երկու տարբեր օր առնվազն երկու երես առ երես հարցազրույց եմ ունեցել որդեգրման գործակալության սոցիալական աշխատակցի հետ: Առաջին հարցազրույցի ժամանակ
որդեգրման գործակալությունն ինձ տվել է սույն Համաձայնության Արձանագրությունը և Հրաժարման փաստաթղթի նմուշային տարբերակներ: Գործակալությունը կարող է ընդունել իմ հրաժարումը երկրորդ կամ հետագա հարցազրույցների ժամանակ:

Իմ առաջին հարցազրույցի օրն էր՝ _____

Իմ առավել վերջին հարցազրույցի օրն էր՝ _____

Բ Ես բնակվում եմ Կալիֆորնիայից դուրս, և վերոնշյալ երեխան իմ ֆիզիկական խնամակալության տակ չէ: Ես վերոնշյալ երեխայից հրաժարվում եմ Կալիֆորնիայի Ընտանեկան օրենսգրքի Հոդված 8700(c)-ի համաձայն:

(Եթե չխնամակալող ծնողը երեխայից հրաժարվում է Կալիֆորնիայի Ընտանեկան օրենսգրքի հոդված 8700(c)-ի համաձայն և բնակվում է Կալիֆորնիայից դուրս, գործակալությունից միայն պահանջվում է փորձել ծառայություններ մատուցել ըստ Կալիֆորնիայի Կանոնակարգերի օրենսգրքի Գլուխ 22-ի Հոդված 35129(b)-ի):

☐ Ես որդեգրման գործակալությունից ստացել եմ ծառայություններ (օրինակ՝ հեռախոսային հարցազրույց): Ծառայությունների մատուցման օրն էր՝ _____:

☐ Ես որդեգրման գործակալությունից ծառայություններ չեմ ստացել:

20. Ես մանրամասնորեն մտածել եմ իմ երեխային պահելու կամ որդեգրման նպատակով նրանից հրաժարվելու պատճառների մասին: Ես իմ երեխայի որդեգրման ծրագիրը քննարկել եմ

որդեգրման գործակալության հետ և որոշել եմ իմ երեխային հանձնել գործակալությանը, քանզի որդեգրությունը ծառայում է իմ երեխայիբարձրագույն շահերին: Ես կարդացել եմ և հասկանում եմ Համաձայնության Արձանագրությունը և Հրաժարման փաստաթուղթը: Ես իմ որոշումը կայացնելու համար լրացուցիչ օժանդակության կամ ժամանակի կարիք չունեմ: Ես որոշել եմ իմ երեխային ընդմիշտ հանձնել _____ -ին՝ որդեգրության նպատակով:
(Գործակալության անվանումը)

☐ Ես անվանանշել եմ ապագա հոգեծնող(ներ)ին:

☐ Ես չեմ անվանանշել ապագա հոգեծնող(ներ)ին:

Ես՝ _____ մայրը/հայրը _____-ի,
(Ծնողի անունը) (Երեխայի անունը)

հասկանում եմ և համաձայն եմ պնդումներին, որոնք վերը նշել եմ իմ անվան սկզբնատառերով, և սույնը ստորագրում եմ իմ ազատ կամքով:

_____ _____
(Ամսաթիվ) (Ծնողի ստորագրությունը)

Լրացնել ԲԱԺԻՆ Ա-ն, եթե ստորագրված է Կալիֆորնիայում
ԲԱԺԻՆ Ա

Ես՝ _____, լիազորված պաշտոնյան
(Անունը և պաշտոնը)
_____ -ի, ընդունում եմ
(Գործակալության անվանումը)
Համաձայնության Արձանագրությունը _____ -ի
(Հրաժարվող ծնողի անունը)

_____ _____
(Ամսաթիվ) (Լիազորված պաշտոնյայի ստորագրությունը)

Վերոշարադրյալ Համաձայնության Արձանագրությունը ստորագրվել է
_____ _____-ի կողմից,
(Ամսաթիվ) (Հրաժարվող ծնողի անունը)
ներկայությամբ՝

_____ _____ _____
(Ամսաթիվ) (Վկայի անունը) (Վկայի ստորագրությունը)

_____ _____ _____
(Ամսաթիվ) (Վկայի անունը) (Վկայի ստորագրությունը)

Լրացնել ԲԱԺԻՆ Բ-ն, եթե ստորագրված է Կալիֆորնիայից դուրս (Կալիֆորնիայի Ընտանեկան օրենսգրքի Հոդված 8700(d)-ի համաձայն)
ԲԱԺԻՆ ԲՆԱՀԱՆԳ՝_____)
ՇՐՋԱՆ՝ _____)
Սույն օրը՝_____, իմ առաջ _____
(Լիազորված պաշտոնյայի անունը)

_____ _____-ի՝
(Պաշտոնը) (Գործակալության անվանումը)

մի կազմակերպության, որը արտոնագրված է կամ այլապես հաստատված է որդեգրման ծառայություններ մատուցելու _____-ի օրենսդրության ներքո, անձամբ
(Նահանգը)
ներկայացավ _____-ը, ում ես անձնապես ճանաչում եմ
(Հրաժարվող ծնողի անունը)
(կամ բավարար ապացույցների հիման վրա ընդունում եմ) որպես այն անձի, ում անունը ստորագրված է սույն փաստաթղթի շրջանակներում և ով հաստատել է, որ ինքը սույնը կազմել է իր լիազորված իրավունակության շրջանակներում, և որ գործիքի վրա իր ստորագրությամբ անձը կամ կազմակերպությունը,որի լիազորությամբ անձը գործում է, կազմել է սույն գործիքը:

_____
(Լիազորված պաշտոնյայի ստորագրությունը)

Լրացնել ԲԱԺԻՆ Գ-ն, եթե ստորագրված է Կալիֆորնիայից դուրս (Կալիֆորնիայի Ընտանեկան օրենսգրքի Հոդված 8700(c)-ի համաձայն)
ԲԱԺԻՆ Գ

ՆԱՀԱՆԳ՝_____)

ՇՐՋԱՆ՝ _____)

Սույն օրը՝_____, իմ՝ նոտար _____-ի առաջ,

անձնապաես ներկայացավ _____-ը, ում ես անձնապես
(Հրաժարվող ծնողի անունը)
ճանաչում եմ (կամ բավարար ապացույցների հիման վրա ընդունում եմ) որպես այն անձի, ում անունը ստորագրված է սույն փաստաթղթի շրջանակներում և ով հաստատել է, որ ինքը սույնը կազմել է իր լիազորված իրավունակության շրջանակներում, և որ գործիքի վրա իր ստորագրությամբ անձը կամ կազմակերպությունը, որի լիազորությամբ անձը գործում է, կազմել է սույն գործիքը:

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ իմ ձեռքով և պաշտոնական կնիքով՝

_____ (Կնիք)
(Ստորագրությունը)